*թէովպացւոց, յորում]*[1] *փե[ւ]ղք*[2] *սպիտակք եւ եղջիւրակնճիթք եւ վագերք:* 49 *Եւ [որոց յարեւելից՝ լերինք, յորում]*[3]*՝ վագերաձիք*[4] *եւ այծամարդք, որք զպատկեր մարդո[յ] ունին եւ են թաւք, եղջիւրաւորք եւ կճղակաւորք, եւ ինձքն*[5] *գեղեցկախայտք*[6] *յոյժ:* 50 *Եւ ի հարաւո[յ] աշխարհ մի է [առ Անծանաւթ երկրաւ]*[7]*, որ Ակիսիմբա[յ]*[8] *կոչի, յորում լինի գազան ինչ՝ կանացի ունելով դէմս եւ ձեռս եւ մէջս, եւ անձն՝ չորքոտանի գազանի, եւ այլ մարդակերպք գազանք շնակնճիթք եւ մերկ[ք]*[9]*, մեծականջք եւ ագեւորք, որպէս զառիւծակապիկ:* 51 *Յորոյ յելից կուսէ՝ Բարձրգագաթունք Եթէովպացիք եւ [այլք՝ մինչեւ ցԼուսնի լեառն, յորում լինին*[10] *քաւշք սպիտակք, զաւրաւորք եւ բռնաւորք*[11]*. որոց յելից կուսէ՝ Ռափսացիք*[12]*, եւ]*[13] *այլ ի ներքո[յ]*[14]*՝ Մարդակեր Եթէովպացիք եւ գետակ մի, որ կոչի Ռապտոս, յորում լինի գազան ինչ՝ հրաշունչ վարազանման, եւ սաղաման$^{ման}$տր*[15] *գազանն*[16]*, որ նման է կոկորդիլոսի, որ անցանէ ընդ հուր եւ շիջուցանէ:* 52 *Լինի [յ]աշխարհն*[17] *այն եւ զեսուբէս գազանն՝ որպէս զոչխար խարտեշ*[18] *եւ յոյժ սիրելի ձկանց, երկակենցաղ գոլով՝ զժողովեալ առ ինքն ձկունսն ուտէ, յորժամ լողա[յ] ի ջուրն:*

[16բ] 53 *Կատարեցաւ երկրորդ հատածն*[19]*:*

## 1 [Ե.] Առաջին բաժին երկրի բնակութեան մարդկան ընդհանուր[20] Ասիա[21] է[22]

2 *Որ սահմանի ի մտից կուսէ Եւրոպեաւ*[23]*, իսկ ի հիւսիսո[յ], [յ]ելից*[24] *եւ ի հարաւոյ՝ Անծանաւթ երկրաւ եւ Լիբեաւ:* 3 *Եւ մտանեն ի մի մի աշխարհք կողման, եւ է նախակողմն Միջերկրայք, որք մտանեն ընդ մէջ Յունաց ծովուն եւ Պոնտոսի, վասն որո[յ] եւ «Միջերկրէ» կոչին:*

4 *Ա. Աշխարհ Ասիա[յ] Բիւթանիա՝ յելից Կոստանդնուպաւլսի, հանդերձ մտիւք ծովագետին Պոնտոսի, որ կոչի Թրակական Պ$^{ա}$ոսպորոս*[25]*, մա$^{ե}$ամբ*[26] *ինչ Պրոպոնտեա[յ] առեալ, ի մեհենէն Արտեմեա[յ], որ կա[յ] յելսն Պոնտոսի, մինչեւ ցմուտ Ռո[ւ]նդակա[յ]*[27] *գետոյ եւ ցՈլոնպիոս*[28]

---

1 *VS չիք* որոց ի հարաւոյ ... յորում *(2 տող) (վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի. AE-ում* ցՆիլոս *է)*

2 *VS* փեղք *փխ* փե[ւ]ղք *(վեր.՝ ըստ նախ. Դ.34)*

3 *VS չիք* որոց յարեւելից ... յորում *(1 տող) (վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի)*

4 *V* վագերաձիգ *փխ* վագերաձիք *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի. տե՛ս բարբառային* **Ք** → **Գ***)*

5 *S* ինձք *փխ* ինձքն *(V)*

6 *V* գեղէցկախայտք *փխ* գեղեցկախայտք *(վեր. Սուքրեանի՝ ըստ հետագայի, տե՛ս նախ. Ե.146)*

7 *VS չիք* առ Անծանաւթ երկրաւ *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի)*

8 *VS* Ակիսամբա[յ] *փխ* Ակիսիմբա[յ] *(վեր.՝ ըստ նախորդների, տե՛ս նախ. Ա.7, 39)*

9 *V* մերկ *փխ* մերկք *(վեր. Սուքրեանի)*

10 *AE* լինի *փխ* լինին *(DPv)*

11 *AE* բեռնաւորք *փխ* բռնաւորք *(DPv)*

12 *AE* են Գաբասացիք, *Dv* Գափսացիք *փխ* Ռափսացիք *(P. Պտղոմէոսի մօտ՝* Ῥάψιοι*)*

13 *VS չիք* այլք մինչեւ ... եւ *(3 տող) (վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի. տե՛ս* **եւ այլք ... եւ այլ***)*

14 *S* ներքս *փխ* ներքո[յ] *(V. տե՛ս բոլորագիր* **ո** → **ս***. համառօտում եւս* ներքոյ *է)*

15 *V* սողամանմանար, *S* սալամանտր *փխ* սաղամանտր *(վեր., համառօտում* սաղամանդր, սաղմանդար*)*

16 *S* գազան *փխ* գազանն *(V)*

17 *V* աշխարհն *փխ* յաշխարհն *(վեր. Սուքրեանի)*

18 *V* խարտեհ *փխ* խարտեշ *(վեր. Սուքրեանի, ըստ որի՝* «Զեսուբէս գազանն կարծի լինել ըստ ոմանց ի մերոց պատմագրաց՝ գայլն արաբացի»*)*

19 *Ընկալելի է՝* «հատածն [աշխարհին]», *քանի որ խօսքը* «Երկրորդ **հատած Լիբիա**»*-ի մասին է*

20 *V* ընթհանուր *փխ* ընդհանուր *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի, տե՛ս բարբառային* **Դ** → **Թ***)*

21 *V* յԱսիա *փխ* Ասիա *(վեր.)*

22 *S* ԱՍԻԱ, *ADEPv* Աշխարհք ընդհանուր Ասիացւոց ԽԴ *փխ* Առաջին բաժին ... Ասիա է *(2 տող) (V. առաջին 4 բառը կարմրով է. լուսանցքում փոքրատառ, բայց պատուոյ նշանների մէջ* ա *է գրուած. այս բոլորն, իրօք, գլխագրի նշաններ են)*

23 *V* Եւրոպէաւ *փխ* Եւրոպեաւ *(վեր. Սուքրեանի)*

24 *V* ելից *փխ* յելից *(վեր. Սուքրեանի)*

25 *V* Փառսփոոոս, *S* Փաւսփոոոս *փխ* Պ$^{ա}$ոսպորոս *(վեր.՝ ըստ նախորդի. տե՛ս նախ. Գ.59՝* «Պ$^{ո}$ոսպորոն»*). հմմտ. բարբառային* **Պ** → **Փ**, *բոլորագիր* **ո** → **ռ** *եւ բանաւոր* **Ր** → **Ռ***)*

26 *V* մասեամբ *փխ* մասամբ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. տե՛ս նախ. Ա.5, Ե.91, 190, 216)*

27 *VS* Ռոդանգա[յ] *փխ* Ռո[ւ]նդակա[յ] *(վեր.՝ ըստ Երեմեանի (Պտղոմէոսի մօտ՝* Ρυνδάκος*). տե՛ս բարբառային* **Կ** → **Գ**. *հմմտ. ստորեւ, նախ. Ե.9)*

28 *VS* զՈլոնպիոս *փխ* ցՈլոնպիոս *(վեր., տե՛ս* **ց** → **զ***)*